ԳՐԱԿԱՆ

ՆԵՐՍԵՀ ԱԲԵՂԱՅ ԱԼՈՅԵԱՆ
Երեւանի Պետական Համալսարանի Հայ բանասիրութեան ֆակուլտետի՝ ակադ. Հրանդ Թամրազեանի անուան Հայ գրականութեան պատմութեան ամբիոնի հայցորդ

Ս. ԵՐՐՈՐԴՈՒԹԵԱՆ ՆԱՐԵԿԱՑԻԱԿԱՆ ԸՄԲՌՆՈՒՄԸ «ՄԱՏԵԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ» ԵՐԿՈՒՄ

Բանալի բառեր. *Գրիգոր Նարեկացի, «Մատեան ողբերգութեան», Աստուած, Սուրբ Երրորդութիւն, հակաքաղկեդոնական, եռամիասնութիւն, աստուածացում, մարդացում, մաքրագործում, աստուածանմանութիւն։*

Key words: *Grigor Narekatsi, "Book of Lamentations", God, Holy Trinity, anti-Chalcedonian, Unity of the Three, divination, incarnation, purification, godlikeness.*

Պատմութիւնը յաճախադէպ հանճարներ ու գլուխ-գործոցներ չի շռայլում։ Նրանք հազուադէպ են, և դրանով իսկ՝ եզակի, անզուգական, աննմանելի, անհասանելի, անսպառելի։

Այդպիսին է Ս. Գրիգոր Նարեկացին, և այսպիսին են Նարեկացու գործերը, մանաւանդ՝ նրա «Մատեան ողբերգութեան» պոեմը, որ մարդկային հոգու աստուածերգութեան անկրկնելի բարձունքներից է, հայ գրականութեան պարծանքը և միջազգային գրականութեան մէջ ծանօթ եզակի արժէքներից մէկը։

Գրիգոր Նարեկացու մասին պահպանուած կենսագրական տեղեկութիւնները հեռու են բաւարար լինելուց։ Յայտնի է, որ նա եղել է Խոսրով Անձեւացեաց եպիսկոպոսի կրտսեր որդին և կրթուել ու դաստիարակուել է Ռշտունեաց գաւառի Նարեկայ վանքում՝ Վանայ ծովի հարաւային ափին։ Բանաստեղծի ծննդեան թուականի հարցում բանասէրները տարակարծիք են։ Ոմանք ընդունում են 951 թուականը[1], իսկ ոմանք էլ գտնում են, որ նա պիտի ծնուած լիներ 940-ական թուականներին[2] և վախճանուած 1003 թուականից յետոյ։

Իր «Ողբերգութեան» յիշատակարանից իմացւում է, որ Գրիգորը վանքում ձեռնադրուել է քահանայ, իսկ ՀԱ. գլխից էլ պարզւում է, որ նրան կոչել են նաեւ վարժապետ (պետ վարժից) ու վարդապետ և որ իր իսկ կենդանութեամբ նրան պատուել են ոչ միայն «արդար» այլեւ «սուրբ» որակումներով[3]։

Հանճարեղ Պ. Սեւակի պնդմամբ «Նարեկացին միայն իր մի քանի Տաղերով կը դառնար մեր առաջին մեծ բանաստեղծը։ Բայց նա կերտեց նաեւ իր «Մատեան»-ը, որ մեր բանաստեղծութեան Աղթամարայ վանքն է՝ լոկ այն զանազանութեամբ, որ «Մատեանն» անկործանելի է ստուգապէս»։

---

[1] **Մ. Չամչեան,** Պատմութիւն Հայոց, Բ, Վենետիկ-1785, էջ 852։ **Մ. Օրմանեան,** Ազգապատում, Ա, Պէյրութ-1959, էջ 1180։ **Մ. Մկրեան,** Գրիգոր Նարեկացի, Երեւան-1955, էջ 114։

[2] **Գ. Աւետիքեան,** Նարեկ աղօթից…, Վենետիկ-1827, էջ 544։ **Մ. Աբեղեան,** Երկեր, Գ, Երեւան-1968, էջ 576։ **Գրիգոր Նարեկացի,** Տաղեր, Երեւան-1957, էջ 10։ **Պ. Սեւակ,** Երկեր, հ. 5, Երեւան-1974, էջ 244։

[3] **Պ. Սեւակ,** Երկեր, հ. 5, Երեւան-1974, էջ 244։

Նարեկացու գլուխ-գործոցը՝ «Մատեան ողբերգութեան» *պոեմը, բաղկացած է 95 գլխից (բանք) և աւելի քան 8500 տողերից։ Իւրաքանչիւր* «Բան» *սկսւում է* «Ի խորոց սրտի խօսք Աստուծոյ հետ» *տողով։* «Մատեան ողբերգութեան» *պոեմը հոգու խորքից բխած զրոյց է Աստծու հետ, որտեղ ներկայացուած են մարդկութեանը պարուրած վշտերն ու ցաւերը, կասկածներն ու համոզմունքները, մեղքերն ու խոստովանանքները, ինքնադատապարտման ու ինքնամաքրման ճանապարհով կատարելութեան հասնելու ձգտումը։ Պոեմում բանաստեղծը խօսում է կեանքի ու մահուան, անկման ու փրկութեան մասին, վերլուծում մարդկային կեանքի անկատարութիւնը, որտեղից էլ սկսւում են նրա ողբերգական ապրումներն ու տարակոյսները։ Մարդը կասկածում է մաքրագործուելով վեր բարձրանալուն, Աստծուն մերձենալուն, անբասիր դառնալուն, տարակուսում է, որովհետեւ նրա մեղքերն աստիճանաբար աւելանում են։ Այնուամենայնիւ, իր բոլոր մեղքերով հանդերձ, նա յոյս ունի և հաւատում է Աստծուց սպասուող փրկութեանը։ Փրկութեան հասնելու միակ ճանապարհը խոստովանութիւնն ու զղջումն են, որոնց շնորհիւ մարդը ազատւում է ստից, կեղծիքից, յանցանքներից, սխալներից, բազմաթիւ այլ արատներից և մաքրւում։*

Գրիգոր Նարեկացու «Մատեան ողբերգութեան»*-ն իր ծնունդից (1001-1003 թթ.) մինչեւ օրս գրեթէ հազարմեայ ճանապարհ է անցել, համարեայ նոյնքան երկար, որքան և հայ ժողովրդական մեծ վէպը՝* «Սասնայ ծռերը»։ *Պատմութեան քառուղիներում մեր գրականութեան այդ խորախորհուրդ Մատեանին վիճակուած էր նոյնքան նշանակալից դէր, որքան Մովսէս Խորենացու և Եղիշէի պատմագրքերին։ Յիշենք թումանեանական բնութագիրը, տրուած Նարեկացուն.* «Այստեղ արդէն հայի լեզուն չի, որ խօսում է, բերանը չի, որ պատմում է, կրակուած սիրտն է, որ այրւում է երկիրը բռնած, տանջուած հոգին է, որ մոնչում է մինչեւ երկինք»[4]։

Նարեկացու հոգին լի է հաւատով առ Աստուած։ Նա իր պոեմը ձօնել է Աստծուն՝ նրա մէջ տեսնելով գեղեցիկը, լաւագոյնը, կատարեալն ու անաղարտը։ Աստծու գոյութիւնը նրա համար աներկբայելի և հմայիչ, կենսական մի ճշմարտութիւն է, և աղօթքը՝ ներքին պահանջ։ Իր աղօթքը առ Աստուած ուղղուած իղձ չէ, այլ հոգեպէս շօշափելի անձնուիրութեան հետ դրական մի խօսակցութիւն։ Աստծուն տրուած իր մակդիրներից կարելի է կերտել իր յղացքը Գերագոյնի մասին։ Տուիչ պարգեւաց, ինքնաբուն բարի, անքնին, ահեղ, անիմանալի, անճառելի, անզննելի, անշօշափելի, անշամանդաղ գիտութիւն, աներկեւան տեսութիւն, անսկիզբ, անստուեր ծագումն, ճշմարիտ էականութիւն, և այլն։ Ու դեռ ծածկոյթ ցանկալի, արփիացնցուղ ցող, կրկնաձիր առողջութիւն, աննախանձ պատիւ, աներեւոյթ շաւիղ, և այլն[5]։

Գրիգոր Նարեկացին այն բանաստեղծն է, ով ամէնից շատ է դիմում «Աստուածաշընչին»՝ *բերելով նրանից բազմաթիւ վկայութիւններ, յիշելով հազարաւոր անուններ, անթիւ անգամներ դիմելով Յիսուսի կերպարի ամենազանազան մարմնաւորումներին։ Ճիշտ կը լինի ասել, որ նա համարձակօրէն փորձում է նորովի* «ընթերցել» *Գիրքը՝ չհեռանալով նրա կարեւորագոյն սկզբունքներից՝ սահմանուած Առաջին երեք տիեզերական ժողովների կողմից։ Նկատելի հակաքաղկեդոնական է, Ս. Երրորդութեան պաշտպան։ Երջանկութիւնը նա չի փնտրում հաճոյքների և կերուխումի մէջ. դա նոյնիսկ ծիծաղելի կը լիներ։ Սակայն նա սոսկ ծէսով չէ, որ ձգտում է հասնել կատարեալին։ Առաւել կարեւորւում է աներկբայ հաւատն առ Աստուած։ Այս իմաստով* «Մատեանը» *շատ հեռու է յոռետեսական լինելուց։ Նա լաւատեսական հզօր ու պոռթկուն ներոյժ ունի իր մէջ։ Դա արտաքուստ նման է ահեղաշունչ միջուկային պայթիւնի, որն իր հետ սրբում-տանում է ճանապարհին հանդիպած ամէն բան։ Բայց ոչ թէ ամլացնում է ամէն ինչ, այլ դրականօրէն վերափոխում, մաքրում և լուսաւորում, որ շուրջը լցուի սիրով ու մարդասիրութեամբ։ Նա աստուածային խղճի մեծագոյն*

---

[4] **Վ. Սահակեան, Ռ. Ներսիսեան,** Գնահատանքի խօսքեր հայոց մեծերի մասին, Երեւան-2005, էջ 5։

[5] **Եղիշէ Վարդապետ,** Նարեկը հայ գրականութեան մէջ, Երուսաղէմ-1947, էջ 44-45։

կրողներից մէկն է, ով իր «Մատեանով» *կապ է ստեղծում երկրի և երկնքի միջև*[6]*։*

«Մատեան ողբերգութեան» *անխոնջ հսկումն ու խոկումը, Նարեկացու դաժան ինքնահալածանքը և ցուցաբերած անձնամարտ վարքը, ինչպէս նկատում են Յ. Նալեանն ու Վ. Լալայեանը, ոչ միայն ապաշխարող անձի հոգեկեցութեան բնոյթով են պայմանաւորուած, այլեւ Աստուծոյ նկատմամբ զօրաւոր սիրոյ արտայայտութիւն է.* ***«բարւոք էր ինձ մեռանիլ, քան թէ զԱստուած մեղօք վշտացուցանել»***[7]*: Նարեկացու սրտի խորքից յորդող սաստիկ զղջման աղբիւրը, ըստ Յ. Նալեանի, բխում է Աստծոյ սիրոյ կրակից, որով նա* ***«զինքն այրէր և իբրեւ զմորենին անկիզելի մնայր»***[8]***:***

Մ. Մկրեանն իրաւացիօրէն նշում է, որ պատմական ճշմարտութիւն է պաշտօնական եկեղեցականութեան կողմից Նարեկացու հետապնդուելը։ Նրա ազատախոհութիւնը, իրականութիւնից դժգոհութիւնը, նրա ընդգծուած միստիցիզմը հիմք են տուել հոգեւորականութեան որոշ շրջաններին՝ մեղադրելու իրեն իբրեւ թոնդրակեցու, թէեւ ինքը՝ բանաստեղծը, իրեն թոնդրակեցի չի համարում, և ինչպէս իր ուսուցիչը գրաւոր հանդէս է եկել այդ շարժման դէմ։ Սակայն ժողովրդական այդ շարժման շատ գաղափարների ազդեցութիւնը Նարեկացու աշխարհայացքի վրայ ակնյայտ է։ Ինքը՝ բանաստեղծն էլ, չի ժխտում այդ ազդեցութիւնը. «Մատեանի» *ՀԵ. գլխում նա նշում է, որ ժամանակին ինքն էլ է տարուել հերձուածողական չարափառութեամբ.* ***«Զի որպէս երբեմն հերձուածականին չարափառութեամբ, ամենապատիրն խաբէութեամբ նենգողին կարթիւ հատուածեալ ի բաց հերքեցայ...»*** *(Բան ՀԵ.ա.2)*[9]*։*

Իր հօր՝ Խոսրով Անձեւացու նման, Գ. Նարեկացին նոյնպէս մեղադրուել է իբրեւ ծայթ, այսինքն քաղկեդոնական, յունադաւան՝ միայն և միայն այն պատճառով, որ նա, որպէս ժամանակի ամենակրթուած անձնաւորութիւն, մեծ սիրով ու յարգանքով էր վերաբերւում յունական մշակոյթին և հարեւան քաղկեդոնական ազգերից որոշ դրական բաներ ուզում էր ներմուծել հայ եկեղեցի։ Այս մասին ականաւոր պատմաբան Միքայէլ Չամչեանը ասում է. «Հերձուածող համարեցաւ նա վասն կամելոյ միաբանել զհայս ընդ այլ եկեղեցեաց՝ ընդ յունաց եւ ընդ վրաց, որ էին քաղկեդոնականք. եւս եւ վասն բարեկարգութիւն առնելոյ ի նոցանէ»[10]:

Դաւանական հանդուրժողականութիւնը Գ. Նարեկացու՝ հանճարեղ բանաստեղծի ու մտածողի, հումանիստական աշխարհայացքի դրսեւորումներից մէկն է։ Դրանով միայն կարելի է բացատրել, որ նա իր «Մատեանը» *գրել է բոլոր քրիստոնեայ ազգերի համար անխտիր, առանց հաշուի առնելու միաբնակ են, թէ երկաբնակ (****«առ բոլոր գումարս բազմահոլով տիեզերակոյտ քրիստոնէից»*** *Բան. Գ. բ.)*[11]*։*

Ըստ Ս. Պօղոսեանի, Գ. Նարեկացու «Մատեանի» *կրօնադաւանաբանական բովանդակութիւն ունեցող, հռետորական ոճով գրուած ԼԴ. ՀԵ. ՂԲ. ՂԳ. գլուխները, նախապէս մի ամբողջական երկ են կազմել, որի մէջ Նարեկացին շարադրել է հայ եկեղեցու դաւանանքի հիմունքները՝ իր խիստ բացասական վերաբերմունքը ցուցադրելով այդ հիմունքներից՝ ժամանակակից գրեթէ բոլոր շեղումների նկատմամբ*[12]*։*

Այդ գլուխները ուղղուած էին ոչ միայն թոնդրակեցիների դէմ, այլեւ՝ երկաբնակ-

---

[6] **Ս. Մխիթարեան,** Մարդու կատարելութեան պահանջը Գր. Նարեկացու Մատեանում (Յօդուած):

[7] **Յ. Նալեան,** Գիրք մեկնութեան աղօթից սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ, հրեշտակական վարդապետին, Կ. Պոլիս, 1745, էջ 50:

[8] Նոյն տեղում, էջ 11: Տե՛ս նաեւ՝ **Վ. Լալայեան,** Սիրոյ խորհրդաբանութիւնը Գրիգոր Նարեկացու «Մատեան ողբերգութեան» մէջ ըստ Յակոբ (պատրիարք) Նալեանի, Կանթեղ, 2-3, 2014, էջ 52-63;

[9] Մատենագիրք Հայոց, հատոր ԺԲ., Գ. Նարեկացի, «Մատեան ողբերգութեան» էջ 460-461:

[10] **Մ. Չամչեան,** Հայոց պատմութիւն, հ. Բ, էջ 1023: Ըստ Չամչեանի, Նարեկացին իսկապէս քաղկեդոնականութիւն է ընդունել: Մինչդեռ, ճշմարտութիւնն այն է, որ քաղկեդոնական չլինելով հանդերձ՝ Նարեկացին ցանկացել է համերաշխութիւն հաստատել հարեւան քրիստոնեայ եկեղեցիների ու ազգերի միջեւ:

[11] Սրբոյ Հօրն մերոյ Գրիգորի Նարեկայ վանից վանականի Մատեան ողբերգութեան, Կոստանդնուպոլ-1845, էջ 220: Տե՛ս նաեւ՝ Մատենագիրք Հայոց, հատոր ԺԲ., Գ. Նարեկացի, «Մատեան ողբերգութեան» էջ 65:

[12] **Ս. Պօղոսեան,** Իմ Նարեկացին, Երեւան-2007, էջ 23:

ների, և դրանցից յատկապէս Հե. գլուխն առանցքային նշանակութիւն ունի, այն իր շուրջն է միաւորում մնացած գլուխները։ Այդ առանցքային «Բան»-ը՝ Հե. գլուխը, Ս. Երրորդութեան դաւանանքին վերաբերող դ-զ մասերով հակասում է ԼԴ. գլխին, իսկ նիւթական եկեղեցու խորհրդի առանձնայատուկ մեկնութեանը վերաբերող հատուածներում այդ գլուխը կապւում է ՂԲ. ՂԳ. գլուխներին։ Այսպիսով այդ վիճելի գլուխները մի ամբողջութիւն են կազմում։ Այն, որ մինչեւ Մատեանի մէջ տարրալուծուելը դրանք մի առանձին երկ են կազմել, որ Նարեկացին դրանք գրել է Մատեանից անկախ, այլ նպատակով, երեւում է նրանից, որ դրանք կազմում են մի ընդհանուր մտայղացմամբ գրուած՝ հայ եկեղեցու դաւանաբանութեանը, Ս. Երրորդութեանը վերաբերող ամբողջական մի աշխատութիւն։

Նարեկացին անտարակոյս տեղեակ էր, թէ իրեն կոնկրետ ինչ հարցերում են մեղադրում. այդ հարցերից առաջինը Ս. Երրորդութեան խորհրդի և դրան խիստ առնչւող Քրիստոսի բնոյթի հարցն է։ Նարեկացին մեղադրուել է որպէս երկաբնակների համախոհ, իսկ երկաբնակներին հայ միաբանները անուանում էին մարդադաւան (նեստորականներ), ինչը նշանակում էր Որդի Աստծուն Հայր Աստծուց ստորադաս համարել, չընդունել Երրորդութեան միաբնոյթ և համագոյ լինելը։ Երկրորդ հարցը եկեղեցու դէրը նսեմացնելու, այն արհամարհելու մէջ է (մի բան, որ բխում էր Նարեկացու միստիցիզմից և նրա Մատեանի կարեւոր արժանիքներից մէկն է) և երրորդ՝ եկեղեցու խորհրդանշաններն արհամարհելու, քամահրելու փորձի մէջ։ Վիճելի գլուխներում Նարեկացին հէնց ձգտում է հերքել իր հասցէին արուող այդ մեղադրանքները կէտ առ կէտ և արդարանալ, հաւաստել իր հաւատարմութիւնը հայ պաշտօնական եկեղեցու դաւանանքին։ Իրականում այս է եղել այդ գլուխները գրելու ընդհանուր մտայղացման, նպատակը[13]*։*

«Մատեանի» *քնարական գլուխներում բարձրացնելով Աստծուն, մարդու փրկութեան յոյսը անմիջականօրէն Աստծոյ հետ կապելով, Նարեկացին իսկապէս արհամարհում է եկեղեցին ու նրա ատրիբուտները։ Աւելին, անգամ Երրորդութեան դէմքերի մէջ խտրութիւն է դնում՝ աւելի շատ շեշտելով, բարձրացնելով Որդի Աստծուն... և ամենազարմանալին այն է, որ նոյնիսկ Աստուածութիւնն է երբեմն նսեմացւում, իսկ վիճելի գլուխներում՝ ընդհակառակը. Նարեկացին չի շեղւում, խիստ հետեւում է, հարազատ է մնում կրօնական դոգմատիկայի պահանջներին՝ դրսեւորելով Ս. Գրքի խորագիտակութիւնը և, ամենակարեւորն է, յատկապէս շեշտւում է մարդու փրկութեան գործում եկեղեցու դէրի մեծ կարեւորութիւնը*[14]*։*

«Մատեանի» *վիճելի գլուխներում կամ ինչպէս ընդունուած է ասել* «Հաւատոյ սահմանմում» *շարադրելով Նիկիական հաւատոյ հանգանակը՝ Նարեկացին* արգելում է այդ դոգմատիկայից շեղուել, սպառնում է շեղուողներին, խոտորեալներին. «***Այլ եթէ ոք հակաճառական բանիւ յաւակնի կապտել զՀայր ի յիւրմէ Բանէն, որ թէ էր երբեմն, յորժամ եւ չէր, եւ անբանութեան բամբասանօք պատուել վարկանի զվեհին մեծութիւն, եւ կամ ստրկութիւն տացէ բղխողին՝ ոչ բանաւորաբար գոլով հոգեւոր, որով այլ իմն գոյութիւն օտար մուծանել եւ կամ ամբոխումն ինչ այլայլական յանարատ պատիւ միութեան սուրբ Երրորդութեանն, զայնպիսիսն քարամբք պարսից հաւատոյ բանից, իբր զդժնդակ դեւս դիմամարտիկս գազանականս, հերքեալ ի միջոյ՝ ի բաց հալածեմք, եղեալ ի նզովս զնոյնս ընդ նոսին՝ փակեմք ընդդէմ նոցին զկենացն մուտ եկեղեցականս գաւթի։ Ուստի զսուրբ Երրորդութիւնն փառաւորելով ի նոյն տէրութիւն միակցորդ հաւասարութեան, զուգաձայն սրբաբանութեամբ, հանգունատիպ հարթութեամբ, օրհնեալ եւ փառաւորեալ յերկնի եւ յերկրի, ի ժողովս անդրանկացն, եւ յազգս երկրածնացս բանականաց յաւիտեանս յաւիտենից. ամէն**» *(Բան ԼԴ.թ. 1-2)*[15]*։*

---

[13] Նոյն տեղում, էջ 25

[14] Նոյն տեղում, էջ 26։

[15] Սրբոյ Հօրն մերոյ Գրիգորի Նարեկայ վանից վանականի Մատեան ողբերգութեան, Կոստանդնուպոլ-1845, էջ 105-106։ Տե՛ս նաև՝ Մատենագիրք Հայոց, հատոր ԺԲ., Գ. Նարեկացի, «Մատեան ողբերգութեան» էջ 247-248։

Սուրբ Երրորդութեան դաւանութիւնը և այդ հարցում հնարաւոր շեղումների անթոյլատրելիութիւնը «հիմնաւորելով», Նարեկացին անցնում է եկեղեցու խորհրդի ու կարգի մեկնութեանը։ Ըստ նրա՝ նիւթական եկեղեցին ինքնին պաշտուել չի կարող և պաշտւում է շնորհիւ նրա մէջ Աստծոյ բնակութեան։ Նարեկացին հնարամտօրէն օգտագործում է հայ միաբնակ եկեղեցու կողմից Որդի Աստծոյ բնոյթի իւրօրինակ մեկնութեան եղանակը. Քրիստոսի մարմինը պաշտւում է ոչ թէ որպէս սովորական մարմին, այլ որպէս Աստծոյ մարմին։

*Նարեկացին մեկնել է նաեւ եկեղեցու խորհրդանիշները՝ ժամհարի փայտի, մեռոնի, սրբապատկերների և այլնի խորհուրդները։ Սա ընդհանուր գիծ է, որ զարգացւում է Նարեկի վիճելի գլուխներում։ Ըստ Նարեկացու տրամաբանութեան, եթէ ոք սրբապատկերները, մեռոնը, ժամհարի փայտը, եկեղեցու շինութիւնը համարում է սոսկ նիւթական, նիւթեղեն, ապա այսպիսի մէկը փաստօրէն Քրիստոսին էլ համարում է զուտ մարդ և ոչ Աստուած, ինչը միաժամանակ Ս. Երրորդութեան խորհրդի ժխտում է. «**Իսկ եթէ ոք ձեռն չարութեան ի վերինն արքայութիւն յանդգնաբար համբառնայցէ, գիւտ ինչ մարմնաւոր եւ կամ հնարք մարդկային եւ կամ արուեստ երկրակենցաղ զսահմանեալ աւանդութիւնս առ ձեռակերտս եկեղեցի վարկանիցի, եւ ոչ պարգեւ առաւել կենաց, եւ ակնկալութիւն աստուածային, եւ Հոգւոյն Սրբոյ յայտնեալ լուսանորոգ նախագրութիւն, եւ երախտեաց բարձրելոյն ամենատուր լիականութիւն, եւ կամաց արարողին խնկաւորեալ խորհրդարան, եւ առաքելոց ձեռինն աջոյ բարեհանճար հիմնարկութիւն, եւ միանգամայն ասել՝ դուռն երկնից եւ քաղաք Աստուծոյ կենդանւոյ եւ մայր կենդանեաց, ազատ ի պարտեաց, եւ ճշգրիտ տեսակ կերպի երեւակիս բանականի, իմանալի՝ խորհուրդ հոգւոյս, եւ շօշափելի՝ պատկեր մարմնոյս, եւ սրբութեանցն այդ անճառից գերազանցեալ նոր սրբութիւն, եւ Քրիստոսեանն նշանաւ պայծառապարծ պսակեցեալ, զայնպիսի ոչ խոստովանողսն մերժէ յերեսաց իւրոց Հայրն ամենակալ ի ձեռն Բանին իւրոյ էակից, բարձեալ ի նմանէ եւ զաւանդ շնորհի Հոգւոյն փառակցի. փակեսցէ զդուռն կենացս այս առագաստի յանդիման նորին։ Իսկ մեք զորս գրեցաք՝ ամին եւ վկայեմք, հաւատացեալ որում կարգեցաքս, յանուն եւ ի փառս ամենակալ Երրորդութեանն եւ միում աստուածութեանն յաւիտեանս յաւիտենից**» (Բան Հե.ժգ. 1-2)[16]։*

Ըստ Յ. Նալեանի՝ մեռոնով օծուածները դառնում են Աստծոյ որդեգիրներ կամ շնորհով Աստծոյ որդիներ[17]։ Այս օծմամբ սրբուելով ադամական և միւս մեղքերից՝ մարդը դառնում է երկնային քաղաքացի Ս. Երրորդութեան ճշմարիտ երկրպագու՝ յոյսով, հաւատով ու սիրով միացած Աստծուն, քանզի առ Աստուած սէրը մարդու սրտում միայն այս օծումից յետոյ է ծնւում[18]։

Նարեկացին իր «Մատեանի» ԻԸ. գլխում Աստծուն անուանում է Մեծ Աստուած, Հայր Ամենակալ, Բարձրեալ Աստուած.

***«Հայր ամենաստեղծ, անունդ սահուր, ձայն սարսափելի, կոչումն ընտանի, բան համբուրելի, ազդումն սքանչելի, հրաման սոսկալի, էութիւն անքննելի, գոյութիւն անճառելի, իսկութիւն անբաւելի, զօրութիւն անզննելի, կամք ամենաբարի, տէրութիւն անսահմանելի, մեծութիւն անչափելի, բարձրութիւն անբովանդակելի, որքանութիւն անկշռելի, առաւելութիւն անհասանելի...»** (ԻԸ.է.)[19]։*

Հօրից անժամանակ ծնւում է Որդին՝ որպէս հայրական լոյսից ծագած ճառագայթ, և Հոգին նոյնպէս անսպառօրէն բխում է Հօրից։ Այդ է պատճառը, ըստ երեւոյթին,

---

[16] Նոյն տեղում, էջ 230-231: Տե՛ս նաեւ՝ Մատենագիրք Հայոց, հատոր ԺԲ., Գ. Նարեկացի, «Մատեան ողբերգութեան» էջ 477-478:

[17] **Յ. Նալեան,** Գիրք մեկնութեան աղօթից սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ, հրեշտակական վարդապետին, Կ. Պոլիս, 1745, էջ ո. ղ. գ.:

[18] Նոյն տեղում, էջ 696:

[19] Սրբոյ Հօրն մերոյ Գրիգորի Նարեկայ վանից վանականի Մատեան ողբերգութեան, Կոստանդնուպոլ-1845, էջ 80: Տե՛ս նաեւ՝ Մատենագիրք Հայոց, հատոր ԺԲ., Գ. Նարեկացի, «Մատեան ողբերգութեան» էջ 203:

*որ Հայր Աստուած հռչակւում է Մեծ Աստուած, դրանով փաստօրէն շեշտւում է Հօր, Որդու և Հոգու պատճառ, սկիզբ, առաջին պատճառ լինելը։ Հօր առաջնայնութիւնը՝ Որդու յարաբերութեամբ ակնյայտ է. Որդին՝ Հոգու հետ, «**յաւէտ բարձրացեալ՝ ի փառս հայրենի**» (Բան կէ.դ.)[20]։*

*Հօրից այսպէս տարբերակւում, տրոհւում են Որդին և Հոգին, այսինքն՝ Նարեկացին որոշակի տարբերութիւն է դնում դէմքերի միջև. Որդու (կենդանի Բանի) միջոցով Հայրը ստեղծում է ողջը, իսկ Հոգու միջոցով՝ կազմում։ Որդու տիրապետութիւնը մարմնաւորի, նիւթականի ոլորտն է, որքան էլ դա զարմանալի թուայ (Որդին «**փշրեալ բաշխի ի մասունս անհատս, զի զհամայնն հաւաքեսցէ առ ի նոյն մարմին իւրումն գլխոյ**» (Բան խէ.բ.)[21], իսկ Հոգու տիրապետութիւնը հիմնականում սահմանափակւում է հոգեղենի ոլորտով, Հոգին հոգեւոր սերմի ցանողն է, և դա նշւում է թէ՛ մատեանում, և թէ՛ տաղերում։*

Եռմիասնութեան մէջ Աստծոյ դէմքերի տարբերութիւնները վերաւում են նրանց նոյնութեամբ, «համազուգութեամբ», *միասնութեամբ.*

***«Աստուած բարերար, հզօր, ահաւոր, հայրդ բարի ողորմութեանդ շնորհի, որոյ անունդ իսկ մեծիդ զգթութիւն եւ զընտանութիւն աւետարանէ, քաղցր դժնէից եւ անգոհացողաց։ Ընդ քեզ եւ որդիդ քո՝ իբրեւ զքեզ, զօրաւոր ձեռն՝ իբրեւ զքոյդ, անժամանակ տէրութեամբ ահեղ, ընդ արարչութեանդ քում բարձրացեալ։ Եւ հոգիդ սուրբ ճշմարտութեան՝ բղխեալ առ ի քէն անսպառութեամբ, կատարեալ իսկութիւն գոյի, էութիւն մշտնջենաւոր, հաւասար քո ամենայնիւ, փառակից որդւոյ քոյ տէրութեամբ։ Երրեակ անձնաւորութիւն՝ համայն անքնին, տրոհեալ ի դիմաց ուրոյն զատուցմամբ, իսկ միաւորեալ համազուգութեամբ, նոյնագոյ բնութեամբ տիրապէս, անշփոթ եւ անանջրպետ՝ միով կամօք եւ կցորդութեամբ. ոչ երիցութիւն ումեմն ի յումեմն, եւ ոչ քթթել մի ական առ նուազութիւն միոյն ժամանեալ...»** (Բան ԺԳ.ա.)[22]։*

*Նարեկացին նոյնիսկ առանձին բառ է կազմում արտայայտելու համար եռմիասնութիւնը. «**թիւ միշտ եզակի եզեռակի փառք**»[23]։ Այստեղ մի դէմքին վերագրուող յատկութիւններն ու յարաբերութիւնները վերագրւում են նաեւ միւսներին. «**Ոչ փոքրկութեամբ որդւոյ զՀայր փառաւորեմ, ոչ նուաստութեամբ Հոգւոյ զՈրդի նախադասեմ. համփառ ունիմ զԵրեսեան՝ եւ նոյն արարչութեամբ**» (Բան ԼԳ. է)[24]։*

Որքան էլ տարօրինակ թուայ՝ Նարեկացու մօտ Աստուած և՛ անմարմին է, և՛ մարմնաւոր (նիւթական), դա բխում է Աստծոյ և բնութեան (մարդու) նոյնութեան և տարբերութեան վերաւումների տրամաբանութիւնից։ Այդ մտքին Նարեկացին յանգում է ոչ ուղղակիօրէն։ Նախ. սկսում է Որդի Աստծոյ բնոյթի քննարկումից։ Միաբնակութեան և երկաբնակութեան հարցերի շուրջ եկեղեցականների վիճաբանութիւնները, մասնաւորապէս՝ հայ և վրաց եկեղեցիների միջեւ, 10-րդ դարում դեռեւս չէին կորցրել իրենց հրատապութիւնը և Նարեկացին, բնականաբար, չէր կարող շրջանցել այդ հարցերը, որոնց նկատմամբ պիտի դրսեւորեր իր որոշակի մօտեցումը։ Եւ, իսկապէս, որպէս հայ քրիստոնէական միջավայրի ծնունդ, նա միաբնակութեան կողմնակից է, սակայն դրանով չի սպառւում նրա մօտեցման բովանդակութիւնը։ Նարեկացին այս հարցում նոյնպէս դրսեւորում է իւրօրինակութիւն՝ հարազատ մնալով իր հայացքների ընդհանուր տրամաբանութեանը։ Նա կարծես սինթեզում է այդ երկու տեսակէտները,

---

[20] Նոյն տեղում, էջ 198: Տե՛ս նաեւ՝ Մատենագիրք Հայոց, հատոր ԺԲ., Գ. Նարեկացի, «Մատեան ողբերգութեան» էջ 419:

[21] Մատենագիրք Հայոց, հատոր ԺԲ., Գ. Նարեկացի, «Մատեան ողբերգութեան» էջ 301:

[22] Նոյն տեղում, էջ 34: Տե՛ս նաեւ՝ Մատենագիրք Հայոց, հատոր ԺԲ., Գ. Նարեկացի, «Մատեան ողբերգութեան» էջ 117-118:

[23] **Գ. Նարեկացի,** Տաղեր, Երեւան-2013, էջ 69: Տե՛ս նաեւ՝ Մատենագիրք Հայոց, հատոր ԺԲ., Գ. Նարեկացի, «Գանձատեար», Ջ.ա., Տաղ յարութեան, Նարեկայ ոգեալ. էջ 647:

[24] Սրբոյ Հօրն մերոյ Գրիգորի Նարեկայ վանից վանականի Մատեան ողբերգութեան, Կոստանդնուպոլ-1845, էջ 98: Տե՛ս նաեւ՝ Մատենագիրք Հայոց, հատոր ԺԲ., Գ. Նարեկացի, «Մատեան ողբերգութեան» էջ 236:

բայց, իհարկէ, ելակէտային ընդունում է միաբնակութիւնը[25]*։*

Որդի Աստծոյ միաբնակ կամ երկաբնակ լինելը Նարեկացու մօտ արտայայտում է երկու սկիզբների՝ հոգեւորի և մարմնաւորի (Աստծոյ և բնութեան (= մարդու), աստուածայինի և մարդկայինի փոխյարաբերութիւնը, նոյնութիւնն ու տարբերութիւնը։ Նարեկացին չի ժխտում աստուածայինի և մարդկայինի տարբերութիւնը կամ նոյնութիւնը, նա դէմ է այն կարծիքին, թէ աստուածայինն ու մարդկայինը միայն տարբեր են կամ միայն նոյնական են (միասնական են)։ Առաջին դէպքում նա փաստօրէն ժխտում է երկաբնակութիւնը, ըստ որի Որդի Աստուած երկու տարբեր (աստուածային և մարդկային) բնոյթ ունի, իսկ երկրորդ դէպքում՝ միաբնակութիւնը (ըստ որի՝ Որդի աստուածը միայն մի բնոյթ ունի. քանզի մարդկայինը նոյնական է աստուածայինին, ապա Որդին միայն աստուածային բնոյթով է օժտուած)՝ առանձին, առանձին, և կողմնակից է երկուսին միաժամանակ, քանի որ ընդունում է աստուածայինի և մարդկայինի և տարբերութիւնը, և նոյնութիւնը՝ միաժամանակ, աւելի ճիշդ՝ Նարեկացին կանգ չի առնում տեսակէտներից մէկն ու մէկի վրայ և միայն այդ մի տեսակէտը համարում վերջնական ճշմարտութիւն, այլ ձգտում է վերառելով ցոյց տալ իւրաքանչիւրի թերի լինելը։

*Նարեկացին ընդունում է, որ Որդի Աստուածը և անմարմին է, և մարմնաւոր։ Զարմանալին այն է, որ Նարեկացին աննկատելիօրէն հակադրւում է օրթոդոքս քրիստոնէութեանը նաեւ Որդի Աստծոյ մարմնաւորութեան հարցում, աւելի շատ՝ մարմնաւորման ժամանակի, տեւողութեան և որպիսութեան հարցում։ Նարեկացին գրում է. «**անապական խառնութեամբ կերպակցեալ զմերս ի մարմնի, ըստ օրինի հոգւոյ ընդ մարմնոյ, եւ ոսկւոյ ընդ հրոյ. եւ կամ յայտնապէս իսկ ասել՝ լուսոյ ընդ օդոյ, ոչ փոփոխեալ եւ ոչ անջատեալ**» (Բան ԼԴ.Ե.2)*[26]*։ Մարմնաւորուած Որդի Աստուածը «**ոչ գոյացաւ ի ժամանակս**»*[27]*, այսինքն՝ Որդի Աստուածը մարմնաւորուեց անժամանակ, իսկ անժամանակ ասելով, Նարեկացին հասկանում է. 1) բացարձակ ընդհատ ժամանակ և 2) բացարձակ անընդհատ ժամանակ, յաւերժ։ Ուրեմն, Որդի Աստուածն անժամանակօրէն, ի սկզբանէ անմարմին է և մարմնաւոր։ Որդի Աստուած մարմնաւորուած է անապական խառնութեամբ և, որպէս այդպիսին, անփոփոխ է ու անանջատ (անբաժան, միասնական)։ Սրանով Նարեկացին հիմք է նախապատրաստում այն հետեւութեան համար, թէ բնութիւնը նոյնական է Աստծուն, հետեւաբար՝ յաւերժ է (անժամանակ), անփոփոխ ու միասնական։ Սակայն մինչեւ այդ հետեւութիւնը, դատողութիւնների մի օղակ եւս կայ. եթէ Որդին, որպէս մարմնաւոր Աստուած, յաւերժ է և անփոփոխ, ապա դա վերաբերում է նաեւ միւսներին և ողջ Երրորդութեանը, ուրեմն. ողջ Աստուածութիւնը ոչ միայն անմարմին է, այլեւ մարմնաւոր (նիւթական)։*

«Անձնական եւ անանձնական
Ընդհատ եւ անընդհատ
Եզակի եւ ընդհանուր»։

*Աստուած, որպէս անմարմին և մարմնաւոր, անձնական է ու անանձնական (սուբյեկտ և օբյեկտ), ընդհատ է և անընդհատ։ Այն անհուն է և անբաւ, «**ի տարր գոյի, եւ յեզրս ծագաց աշխարհի, սկիզբն ամենայնի եւ յամենայնի ամենայն լրմամբ**» (Բան ԽԱ.)*[28]*։ Որպէս այդպիսին՝ Աստուած անսահման է, անպարագիր, անվայրափակ,* «աննուազելի շնորհ», «անպակասելի գանձ». «***Մատուցեալ միշտ եւ անպակաս մնայ ի լրութեան... անսպառութեամբ, բոլոր յամենեսին եւ բնաւ յամենայնում...***» *(Բան խէ.բ.)*[29]*։*

---

[25] **Ս. Պօղոսեան,** Իմ Նարեկացին, Երեւան-2007, էջ 78:

[26] Սրբոյ Հօրն մերոյ Գրիգորի Նարեկայ վանից վանականի Մատեան ողբերգութեան, Կոստանդնուպոլ-1845, էջ 104: Տե՛ս նաեւ՝ Մատենագիրք Հայոց, հատոր ԺԲ., Գ. Նարեկացի, «Մատեան ողբերգութեան» էջ 245:

[27] Նոյնտեղում, էջ 103: Տե՛ս նաեւ՝ Մատենագիրք Հայոց, հատոր ԺԲ., Գ. Նարեկացի, «Մատեան ողբերգութեան» էջ 245:

[28] Նոյնտեղում, էջ 121: Տե՛ս նաեւ՝ Մատենագիրք Հայոց, հատոր ԺԲ., Գ. Նարեկացի, «Մատեան ողբերգութեան» էջ 277:

[29] Նոյնտեղում, էջ 134: Տե՛ս նաեւ՝ Մատենագիրք Հայոց, հատոր ԺԲ., Գ. Նարեկացի, «Մատեան ողբերգութեան» էջ 301:

*Նարեկացին բազմազանութեան միասնականութիւնը տեսնում է Աստծոյ մէջ, այսպէս է դիմում նրան. «**համայնդ յամենայնում...**» (Բան ԻԳ.դ.)[30]։*

Գրիգոր Նարեկացու «Մատեանը» *անկրկնելի, աստուածաբոյր այնպիսի մի ստեղծագործութիւն է, որի իւրաքանչիւր տողում հանդիպում ենք Քրիստոսին, Ով իբրեւ սիրող, գթացող ու ողորմած Հայր լսում է մեղքի տիղմի մէջ թաղուած իր որդուն։* «Մատեան ողբերգութիւնը» *ոչ միայն Նարեկացու, այլեւ ողջ մարդկութեան, մեղաւոր մարդու հոգու անլռելի ղողանջն է առ Աստուած բարձրացած[31]։*

«Մատեան ողբերգութեան» աղօթագիրքը Աստծուց տրուած (Ս. Հոգու շնորհի հանճարով ծնուած) ողորմութիւն է Նարեկացուն (և աշխարհին), ինչպէս նաեւ Նարեկացի քահանայի նուէրն է Աստծուն, որի սրբագործման համար եւս խնդրում է.

***«Եւ հոտոտեսցիս յայս նուէր բանի անարիւն զոհի, թագաւոր երկնի, եւ օրհնեալ սրբեա զտառ մատենի այսր ողբերգութեան»** (Բան ՁԸ. բ)[32]։*

Նարեկայ վանքի իմաստասէրը, սակայն, ձգտում է հասնել անդադար աղօթքի «մատոյցներին»՝ *բացառիկ մի եղանակով, որ իր փոխուելուց յետոյ էլ «**Ի խորոց սրտի**» Աստծուն ուղղուած խօսքերը չլռեն, այլ գալիք սերունդների շուրթերով անվերջ բարբառեն.*

***«Եւ գրեալ դրոշմեսցես յարձան յաւիտեան ընդ հաճոյականացն սպասաւորութիւնս կացցէ առաջի քո մշտնջենաւոր»** (Բան ՁԸ. բ),*

*որպէսզի՝ **«յիշատակեսցի ի լսելիսդ քո հանապազ, եւ խօսեսցի բերանովք հրեշտակաց քոց, տարածեսցի հանդէպ աթոռոյ քոյ եւ ընծայեսցի ի սրահ սրբութեան քոյ, խնկեսցի ի տաճար անուան քոյ եւ բուրեսցի ի սեղան փառաց քոց, պահեսցի ի գանձարանի քում»[33]։***

Ըստ Յակոբ Նալեանի՝ գանձարանն Աստծոյ անմոռաց յիշողութիւնն է, որտեղ Նարեկացին ձգտում է պահել իր սրտի խորքերից պեղուած գանձերը, որպէսզի ուրիշների աղօթելուց (որոնք «Մատեան»-ով *պիտի աղօթեն) նաեւ ինքը համարուի աղօթած[34]։*

Այսպիսով Ս. Երրորդութեան նարեկացիական ըմբռնումը «Մատեան ողբերգութեան» *երկում, որը բաղկացած է 95 գլուխներից և աւելի քան 8500 տողերից, հոգու խորքից բխած զրոյց է Աստծու հետ, որտեղ ներկայացուած են մարդկութեանը պարուրած վշտերն ու ցաւերը, կասկածներն ու համոզմունքները, մեղքերն ու խոստովանանքները, ինքնադատապարտման ու ինքնամաքրման ճանապարհով կատարելութեան հասնելու ձգտումը։*

Նարեկացին իր պոեմը ձօնել է Աստծուն՝ նրա մէջ տեսնելով գեղեցիկը, լաւագոյնը, կատարեալն ու անաղարտը։ Աստծու գոյութիւնը նրա համար աներկբայելի և հմայիչ, կենսական մի ճշմարտութիւն է, և աղօթքը՝ ներքին պահանջ։ Նա համարձակօրէն փորձել է նորովի «ընթերցել» *Ս. Գիրքը՝ չհեռանալով նրա կարեւորագոյն սկզբունքներից՝ սահմանուած Առաջին երեք տիեզերական ժողովների կողմից։ Նկատելի հակաքաղկեդոնական է, Ս. Երրորդութեան պաշտպան։*

«Մատեանի» *քնարական գլուխներում Նարեկացին Ս. Երրորդութեան դէմքերի մէջ խտրութիւն է դնում՝ աւելի շատ շեշտելով, բարձրացնելով Որդի Աստծուն... և ամենազարմանալին այն է, որ նոյնիսկ Աստուածութիւնն է երբեմն նսեմացում, իսկ*

---

[30] Նոյնտեղում, էջ 63։ Տե՛ս նաեւ՝ Մատենագիրք Հայոց, հատոր ԺԲ., Գ. Նարեկացի, «Մատեան ողբերգութեան» էջ 171։

[31] **Պ. Խաչատրեան,** Գրիգոր Նարեկացին և հայ միջնադարը, Ս. Էջմիածին-1996, էջ 56

[32] Սրբոյ Հօրն մերոյ Գրիգորի Նարեկայ վանից վանականի Մատեան ողբերգութեան, Կոստանդնուպոլ-1845, էջ 262-263։ Տե՛ս նաեւ՝ Մատենագիրք Հայոց, հատոր ԺԲ., Գ. Նարեկացի, «Մատեան ողբերգութեան» էջ 535։

[33] Նոյնտեղում, էջ 263։ Տե՛ս նաեւ՝ Մատենագիրք Հայոց, հատոր ԺԲ., Գ. Նարեկացի, «Մատեան ողբերգութեան» էջ 535։

[34] **Յ. Նալեան,** Գիրք մեկնութեան աղօթից սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ, հրեշտակական վարդապետին, Կ. Պոլիս, 1745, էջ ոծա։ Տե՛ս նաեւ՝ Մատենագիրք Հայոց, հատոր ԺԲ., Գ. Նարեկացի, «Մատեան ողբերգութեան» էջ 535-536։

վիճելի՝ ԼԴ. ՀԵ. ՂԲ. ՂԳ. գլուխներում՝ ընդհակառակը. Նարեկացին չի շեղւում, խիստ հետեւում է, հարազատ է մնում կրօնական դոգմատիկայի պահանջներին՝ դրսեւորելով Ս. Գրքի խորագիտակութիւնը և, ամենակարեւորն է, յատկապէս շեշտում է մարդու փրկութեան գործում եկեղեցու դէրի մեծ կարեւորութիւնը։

Նարեկացին իւրահատուկ կերպով է ընկալում Քրիստոսին, քանզի Նարեկայ վանքի սուրբ հայրը աստուածատես է։ Անշուշտ, մեր երանելի վարդապետը սեփական անչքերով տեսել է Քրիստոսին, պատարագի ժամանակ զգացել և շոշափել է պատարագուող Տիրոջը և Ս. Հաղորդութեան միջոցով ընդունել իր մարմնի մէջ՝ միաւորուելով Տիրոջ հետ, սակայն միեւնոյն է Ս. Գրիգոր Նարեկացու համար Քրիստոս ամբողջովին մնում է անհասանելի, անպատմելի մի գոյութիւն։

*Նարեկացին նոյնիսկ առանձին բառ է կազմել արտայայտելու համար եռմիասնութիւնը. «**թիւ միշտ եզակի եզեռակի փառք**»[35]: Այստեղ մի դէմքին վերագրուող յատկութիւններն ու յարաբերութիւնները վերագրւում են նաեւ միւսներին. Որդուն փոքրացնելով չէ, որ ես փառաւորում եմ Հօրը, եւ ոչ էլ Հոգին նուաստացնելով՝ Որդուն եմ տալիս նախապատուութիւնը, այլ դաւանում եմ Երեքն համափառ՝ նոյն արարչութեամբ (Բան ԼԳ. ե.)։*

«Մատեան Ողբերգութեան» *աղօթագիրքը Աստծուց տրուած (Ս. Հոգու շնորհի հանճարով ծնուած) ողորմութիւն է Նարեկացուն (և աշխարհին), ինչպէս նաեւ Նարեկացի քահանայի նուէրն է Աստծուն, որի սրբագործման համար եւս խնդրում է.*

***«Եւ հոտոտեսցիս յայս նուէր բանի անարիւն զոհի, թագաւոր երկնի, եւ օրհնեալ սրբեա զտառ մատենի այսր ողբերգութեան»** (Բան ՁԸ. բ.)[36]։*

[35] Մատենագիրք Հայոց, հատոր ԺԲ., Գ. Նարեկացի, «Գանձատեար», Զ.ա., Տաղ յարութեան, Նարեկայ ոգեալ. էջ 647:

[36] Մատենագիրք Հայոց, հատոր ԺԲ., Գ. Նարեկացի, «Մատեան ողբերգութեան» էջ 535:

Ն. Ա. ԱԼՈՅԵԱՆ

ՍԲ. ԵՐԲՈՐԴՈՒԹԵԱՆ ՆԱՐԵԿԱՑԻԱԿԱՆ ԸՄԲՌՆՈՒՄԸ «ՄԱՏԵԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ» ԵՐԿՈՒՄ

Ամփոփում

Սբ. Երրորդութեան նարեկացիական ըմբռնումը «Մատեան ողբերգութեան» *երկում՝ կարծես խտացուած է իր իսկ ստեղծած՝* «եզեռակի» *(*«թիւ միշտ եզակի եզեռակի փառք»*) բառում, որով շեշտելով Հօր, Որդու և Սուրբ Հոգու եռմիասնութիւնը, նա մի դէմքին վերագրուող յատկութիւններն ու յարաբերութիւնները վերագրում է նաեւ միւսներին։ Որդուն փոքրացնելով չէ, որ փառաւորում է Հօրը, և ոչ էլ Հոգին նուաստացնելով՝ Որդուն է տալիս նախապատուութիւնը, այլ դաւանում է* «Երեքն համափառ՝ նոյն արարչութեամբ» *(Բան ԼԳ.Ե.)։ Այդուհանդերձ Նարեկացին* «Մատեանի» *քնարական գլուխներում իւրահատուկ կերպով է ընկալում Քրիստոսին և Սբ. Երրորդութեան դէմքերի մէջ կարծես խտրութիւն է դնում՝ աւելի շատ շեշտելով ու բարձրացնելով Որդի Աստծուն։ Միաժամանակ չի շեղւում և խստօրէն հետեւում է կրօնական դոգմատիկայի պահանջներին՝ դրսեւորելով Սբ. Գրքի խորագիտութիւն, համարձակօրէն փորձում է նորովի* «ընթերցել» *Սբ. Գիրքը՝ չհեռանալով առաջին երեք տիեզերական ժողովների կողմից սահմանուած կարեւորագոյն սկզբունքներից։*

FR. N. ALOYAN

NAREKATSI'S PERCEPTION OF HOLY TRINITY IN HIS "BOOK OF LAMENTATIONS"

Summary

Narekatsi's perception of Holy Trinity in the "Book of Lamentations" can be encompassed in a word he created himself - "yezeraki" ("a number which is always singular, singular glory"). With this, he emphasizes the unity of the Father, the Son and the Holy Spirit, attributing the features and relations of one to the other two. It is not "by disparaging the Son" that he glorifies the Father, neither he "subordinates" the Holy Spirit "by naming the Son first", but he claims: "I hold the Trinity equal in glory and in creation co-created" (33.E). Nevertheless, in the lyrical sections of the "Book of Lamentations" Narekatsi's perception of the Christ is unique, and he seems to make a distinction between the faces of the Holy Trinity, emphasizing and elevating the Son. At the same time, Narekatsi does not deviate from the strict religious dogmatic requirements, and displaying considerable ingenuity of the Holy Book, he attempts to "read" it in